

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):**

**ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց  
համայստանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Мащтоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

### Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Կ.Վ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ը.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

# ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎԱՏՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՍԱԽՆԴՐԵՐԸ ԼՂՅ-ՌՒ

## Յերմինե ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՀՊՏՀ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, ասպիրանտ

[hermine.katvalyan@yahoo.com](mailto:hermine.katvalyan@yahoo.com)

Գիտական դեկանալիք՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ., Գրիգոր Նազարյան

Անցման սկզբնական շրջանում սոցիալ-տնտեսական ցուցումները, ավանդական տնտեսական կապերի խզումը, բնակչության կենսամակարդակի և գնողունակության անկումը, պատերազմական գործողությունները, ներդրումային ճգնաժամը հանգեցրեցին ԼՂՅ տնտեսության խիստ անբարենպաստ ծևախեղումների, որն իր անմիջական արտացոլումը գտավ արտաքին առևտության կառուցվածքում:

ԼՂՅ արտաքին առևտության մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար դիտարկելով արտահանումը, ներմուծումը և ապրանքաշրջանառությունը 2007-2015 թթ. (տե՛ս Աղյուսակ 1):

## Աղյուսակ 1

Արտաքին առևտության ցուցանիշները ԼՂՅ-ում /հազ. ԱՄՆ դոլար/<sup>1</sup>

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Արտաքին առևտության հաշվեկշիռ	- 1322 93.7	- 1948 85.3	- 1792 85	- 1985 91	- 2335 51.3	- 2334 80.8	- 2091 96.8	- 2373 23.3	- 1903 92.7
Ներմուծ. ծածկ. գործակից	0.354	0.22	0.242	0.274	0.254	0.198	0.222	0.214	0.246
Արտահան. միջին հակված.	35.1	19.3	20.4	23.7	21.9	15.5	14.5	14.2	14.2
Ներմ. միջին հակված.	99.1	87.8	84	86.4	86.1	78	65.3	66.5	57.6

<sup>1</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ «Լեռնային Դարաբաղի արտաքին առևտություն, 2015թ.» և «Լեռնային Դարաբաղի Յանուարական առևտության վիճակագրական տարեգիրքը 2008-2014թ.» հրապարակումների հիման վրա:

Ապր.-Հունաց.	-	10.0	-3.6	18.5	12.8	-11.1	-5.9	11.6	-14.2
Արտ. աճը	-	-24.1	4.1	30.5	6.4	-27.4	3.2	8.4	-4.0
Ներմ. աճը	-	22.0	-5.3	15.5	14.5	-7.0	-7.7	12.3	-16.4

2008-2015 թվականների ընթացքում ԼՂՀ արտաքին ապրանքաշրջանառության աճը դոլարային արտահայտությամբ տարեկան կտրվածքով միջինում կազմել է 2.6 տոկոս, ներմուծումն այդ տարիների ընթացքում ավելացել է տարեկան միջինը 3.5 տոկոսով, իսկ արտահանումը նվազել է 0.4 տոկոսով: 2014թ. արդյունքներով ԼՂՀ-ն արտաքին առևտուր է իրականացրել 24 երկրների հետ: Այդ տարվա արտաքին ապրանքաշրջանառության 92.3%-ը բաժին է ընկել ՀՀ-ին, 1.2%-ը՝ ԱՊՀ երկրներին և 6.5%-ը՝ այլ երկրներին: 2015թ. ԼՂՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ նվազել է 14.2%-ով: Ներմուծման ծավալը 2015թ. նվազել է 16.1%-ով և կազմել 252.4 մլն ԿՄՆ դոլար, արտահանումը՝<sup>4</sup> 4 տոկոսով:

Արտահանման ծավալում մեծ տեսակարար կշիռ են կազմել «Հանքահումքային մթերքներ», «Բուևական ծագման արտադրանք», «Պատրաստի սննդի արտադրանք», և «Թանձարժեք և կիսաթանձարժեք քարեր, թանձարժեք մետաղներ և դրանից հրեր» ապրանքախմբերը (2014թ. դրությամբ համապատասխանաբար 52.3%, 9.5%, 8.7% և 8.6%): Ներմուծվող ապրանքախմբերից կարելի է առանձնացնել «Հանքահումքային մթերքներ» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը, որոնց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 20.5% և 15.7%, իսկ ներդրումային բնույթի ապրանքների տեսակարար կշիռը կազմել է 10.2%<sup>1</sup>:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ ԼՂՀ արտաքին առևտուրի ամենաբնորոշ գիծը խիստ տատանողականությունն է, ինչը պայմանավորված է չկարգավորված հակամարտությամբ, ներդրումային անբարենպաստ միջավայրով, արտաքին շուկաներ ուղղակի մուտքի բացակայությամբ, արտահանման հումքային և գյուղատնտեսական ուղղվածությամբ, որոնց գները համաշխարհային շուկայում բավականին տատանողական են, բացի այդ գյուղատնտեսական արտադրանքի ծավալները մեծապես կախված են բնակչիմայական պայմաններից:

Զանի որ արտահանման հիմնական նպատակը ներմուծման ֆինանսավորումն է, պարզենք, թե ներմուծման քանի տոկոսն է ֆինանսավորվել արտահանման հաշվին, հաշվենք ներմուծման ծածկման գործակիցը<sup>2</sup>

<sup>1</sup> Լեռնային Դարարադի արտաքին առևտուրը, 2015թ, Եջեր՝ 9-23:

<sup>2</sup> Sources & Methods of the OECD Economic Outlook, <http://www.oecd.org/eco/outlook/sources-and-methods.htm>

(արտահանման և ներմուծման հարաբերակցությունը) (տե՛ս աղյուսակ 1),): Վերջինիս լավագույն ցուցանիշը գրանցվել է 2010թ.-ին, երբ արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 27.4%-ը, վատագույնը՝ 2012թ.-ին՝ 19.8 %՝ պայմանավորված 27.4 % արտահանման կրճատմամբ:

Ինչ վերաբերում է արտահանման և ներմուծման հակվածությանը (տե՛ս աղյուսակ 1), ապա պետք է նշել, որ մինչև 2012 թվականը ներմուծման հակվածությունը բավականին բարձր էր, ինչը ցույց էր տալիս երկրի ինստ բարձր կախվածությունը արտաքին շուկաներից, սակայն վերջին տարիներին ներմուծման հակվածությունը կայուն և վագում է, ինչը խոսում է ներմուծման փոխարինման քաղաքականության արդյունավետության մասին: Արտահանման միջին հակվածությունը ԼՂՀ-ում կազմում է 20%, այն դեպքում երբ ներմուծման միջին հակվածությունը կազմում է 79 %, այսինքն 4 ասգամ գերազանցում է արտահանման հակվածությանը, սա նշանակում է, որ երկրի առևտրային քաղաքականության առաջնահերթությունը պետք է լինի ներմուծման փոխարինման քաղաքականությունը:

Միջազգային առևտրում այս կամ այն երկրի մրցունակությունը գնահատելու հնարավորությունները բազմազան են: Դրանցից մեկն էլ երկրի մրցունակության գնահատումն է՝ Ելնելով համեմատական առավելություններից: Այս առումով ամենատարածված ցուցանիշներից մեկն արտահայտված համեմատական առավելությունների (ԱՀԱ) ցուցանիշն է, որն առաջարկվել է Բելա Բալասայի կողմից<sup>1</sup>: ԱՀԱ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$RCA_i = (X_i - M_i) / (X_i + M_i),$$

որտեղ՝

$X_i$ -ն յուրաքանչյուր ի-րդ ճյուղի ապրանքային խմբի արտահանման արժեքն է,  $M_i$ -ն յուրաքանչյուր ի-րդ ճյուղի ապրանքային խմբի ներմուծման արժեքն է,  $RCA_i$ -ն յուրաքանչյուր ճյուղի ապրանքային խմբի արտահայտված համեմատական առավելությունն է:

Ցուցանիշը արժեքներ է ընդունում (-1,1) միջակայքում: Եթե ԱՀԱ-ն հավասար է 1, նշանակում է ներմուծումը զրոյական է, այսինքն՝ երկիրը արտադրում է այդ ապրանքը՝ բավարարելով ներքին կարիքները և արտահանելով դրա մի մասը, իսկ -1 արժեքը ցույց է տալիս, որ երկիրը չի կարող արտահանել այդ ապրանքը և ներմուծում է՝ սեփական պահանջարկը լոիկ կամ մասամբ բավարարելու համար: Փորձենք կիրառել այս մոդելը ԼՂՀ-ի համար:

<sup>1</sup> Balassa B., Comparative Advantage in Manufactured Goods: Reappraisal, The Review of Economics and Statistics, 1986, p. 315-19.

Արտահայտված համեմատական առավելությունների գործակիցը  
ԼՂՀ-ում ըստ ապրանքախմբերի<sup>1</sup>

Ապանքախմբեր	2015
Կենդանի կենդանիներ	0.5
Հացահատիկ	0.6
Բանջարեղենի, պտուղների, ընկույզ և բույսերի վեր.	0.1
Ոգելից և ոչ ոգելից խմիչք	-0.5
Պատրաստի սննդի արտադրանք	-0.8
Հանքաքար, խարամ, մոխիր	1.0
Բնական կամ արհեստական մարգ.,թանկ. կիսաթանկ քարեր	0.6

Արտաքին առևտուրն ըստ խոշոր ապրանքախմբերի դիտարկելու դեպքում դժվար է նկատել, որ արտահանման մեջ մեծ բաժին ունեցող ապրանքախմբերը գերիշխում են նաև Ներմուծման կառուցվածքում։ Սա խոսում է Ներճյուղային առևտորի առկայության մասին։ Ներճյուղային առևտուր տեղի է ունենում, երբ երկիրը և՝ Ներմուծում, և՝ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները։

Սա ավելի լավ պատկերացնելու համար հաշվենք Ներճյուղային առևտորի գործակիցը ԼՂՀ-ում 2015թ.։ Ներճյուղային առևտորի գործակիցն իրենից Ներճյուղացնում է արտահանման և Ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին։ Եթե Նշված ցուցանիշը հավասար է «0», ապա Նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր։ ԼՂՀ-ն միակողմանի առևտուր է «հանքաքար, խարամ, մոխիր», «հանքահումքային արտադրանք», «տրանսպորտային միջոցներ», «կահույք», մյուս ապրանքախմբերի մասով ԼՂՀ-ն իրականացնում է երկկողմանի առևտուր։

Արդի փուլում ԼՂՀ արտաքին առևտորային քաղաքականությունն ունի բազմաթիվ հիմնախնդիրներ

- Արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքը խիստ համակենտրոնացված է։ Արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 5 ապրանքային խմբերը միշտն հաշվով ապահովում են ամբողջ ապրանքային արտահանման 85%-ը, ընդ որում միայն «հանքաքար, խարամ, մոխիր» ապրանքախումբը դիտարկվող տարիներին միշտնում ապահովել է արտահանման 42 %-ը։ Իհարկե, հանքարդյունաբերության զարգացումը ենթադրում է տնտեսական ինքնուրույնություն, սեփական արտադրության հումքային ապահովածություն, մրցակ-

<sup>1</sup> Նշշվարկվել է հեղինակի կողմից «Դարաբաղի արտաքին առևտուրը, 2015թ.» -ի տվյալների հիման վրա։

ցային առավելությունների ձեռքբերում, սակայն ԼՂՀ հանքագործական արդյունաբերության արտահանման աճի բարձր տեմպերը չեն նպաստում տնտեսական ներուժի իրացմանը, քանզի հումքը ոչ թե վերամշակվում, այլ արտահանվում է: Ուստի նպատակահարմար է, ոչ թե անընդհատ ավելացնել ճյուղի արդյունահանման և արտահանման տեմպերը, այլ տեղում հաջորդաբար իրար լրացնող տեխնոլոգիական փուլերով այդ հումքատեսակներից ստանալ պատրաստի արտադրանք, որը կապահովի արտադրվող հումքատեսակների ավելի բարձր գներով ելք արտաքին շուկաներ: Նույն իրավիճակն է նաև աշխարհագրական կառուցվածքի պարագայում: Սակայն պետք է փաստել, որ տարեցտարի աշխարհագրական կառուցվածքը ընդլայնվում է:

ԼՂՀ-ում արտահանումն ունի ընդգծված հումքային բնույթ: Մասնագիտանալով հումքի արտահանման բնագավառում՝ պետք է հաշվի առնելի, որ այդ իրողությունը հանգեցնում է երկրի ներում կառուցվածքային ոչ բարենպաստ փոփոխությունների: Այսպես, ներմուծմանը փոխարինող ճյուղերից ռեսուրսները սկսում են հոսել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունահանող ճյուղեր, որի արդյունքում ծևախեղվում է երկրի տնտեսության կառուցվածքը, ինչպես նաև ավելանում է ներմուծվող աղբանքների ծավալները: Ներմուծման առումով պետք է փաստել, որ ԼՂՀ ներմուծվող աղբանքատեսակների մեջ բավականին մեծ է այն աղբանքների տեսակարար կշիռը, որոնց արտադրությունն կարելի է կազմակերպել տեղում: Օրինակ սննդի արդյունաբերության ճյուղերը, թեթև արդյունաբերության արտադրանքը, որի աղբատիկ անվանացանկից դեռևս արտահանվում են միայն գորգերը: Բացի այդ, ԼՂՀ ներմուծումը շատ թանկ արժե բարձր տրանսպորտային ծախսների պատճառով, ինչն էլ բացասական ազդեցություն է ունենում առևտրային հաշվեկշռին, վերջին հաշվով տնտեսական աճի վրա:

ԼՂՀ-ն ունի տնտեսության այնպիսի ճյուղեր և դրանց զարգացման համար անհրաժեշտ այնպիսի հումքային բազա, որ տեխնոլոգիական վերագինման և վերակառուցման միջոցով կարող են մուտք գործել համաշխարհային շուկա: Դրանցից հիշատակենք գյուղատնտեսական հումքի վերամշակումը, սննդի, շինանյութերի, գինու, կոնյակի, հանքային շրերի արտադրությունը, այդպիսիք են նաև ռադիոտեխնիկան և թեթև արդյունաբերության ճյուղերը, որոնք ժամանակին ունեցել են զարգացման բարձր մակարդակ՝ ապահովելով թողարկված արտադրանքի լայն պահանջարկ<sup>1</sup>:

Դեռևս չճանաչված լինելու, աշխարհաքաղաքական ոչ բարենպաստ պայմանների նոր հարաբերությունների անցման պատճառով ԼՂՀ-ն գտնվում է դժվարին իրավիճակում: Ուստի երկրի տնտեսության կայուն աճի և արդյունավետ կառուցվածքի ապահովումը, ներմուծման փոխարինումը և արտահանման խթանումը բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման և երկրի պաշտպանության ապահովման հիմնական ուղին է:

<sup>1</sup> Ասրյան Շ. «Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կատարելագործման արդի հիմնախնդիրները», Բամբեր, ԴՊՏԱ 1(13), Երևան 2008 թվական, Էջ 144:

## **Դերմինե Կատվալյան**

**ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄԱԿԱՆՆԴՐԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ**

**Յիմաքառեր՝ Արտահանման միջին հակվածություն, արտահայտված  
համեմատական առավելություն, ներմուծման ծածկման գործակից**

Յոդվածի նպատակն է բացահայտել ԼՂՅ արտաքին առևտրային քաղաքականության բացթողումները: Վյդ նպատակով ուսումնասիրվել է ԼՂՅ արտահանման և ներմուծման կառուցվածքը. պարզվել է, որ ԼՂՅ արտահանումն ունի համակենտրոնացվածության բարձր մակարդակ: Վյնությունում բացահայտվել են ԼՂՅ արտահանման համեմատական առավելություններ և զարգացման պոտենցիալ ունեցող ճյուղերը: Վերլուծության արդյունքում մատնանշվել է արտահանման արդյունավետ կառուցվածքի ձևավորման նպատակով ճեղսարկվելիք քայլերը:

*Էրմինե Կատվալյան*

## **ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ ЭФФЕКТИВНОЙ СТРУКТУРЫ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ В НКР**

**Ключевые слова:** Удельный вес экспортта, выраженные сравнительные преимущества, коэффициент покрытия импорта

В статье рассматриваются проблемы внешнеторговой политики в НКР. Для этого была рассмотрена структура экспорта и импорта: выяснилось, что структура экспорта является высоко концентрированным. Далее выявлены сравнительные преимущества в экспортном секторе, а также сектора, которые имеют потенциал для дальнейшего развития. В результате анализа были определены шаги торговой политики которые необходимо предпринять для создания эффективной структуры экспорта.

*Hermine Katvalyan*

## **THE PROBLEMS OF FORMATION EFFECTIVE STRUCTURE OF EXTERNAL TRADE IN NKR**

**Key words:** *Export ratio, expressed comparative advantage, import coverage ratio*

The aim of the article is to identify the issues of foreign trade policy in NKR. For this purpose, export and import structure has been examined: revealed that the export structure is highly concentrated. Than exposed comparative advantages in export sector, as well as sectors, having potential for further development. As a result of analysis the steps of trade policy were identified in order to formata effective export structure in NKR .